ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.12.2014թ.
233-ի 6

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Մեզ է դիմել ՀՀ քաղաքացի Արմանուշ Ամիրխանյանը եւ խնդրել է իրեն օգնել տեղեկատվություն ստանալու հարցում: 2014թ.-ի սեպտեմբերի 1 թվագրված գրությամբ նա դիմել է Երեւանի քաղաքապետարանին՝ Հաղթանակ թաղամասի 5-րդ փողոցի հ.82 հասցեում գտնվող հողամասի սահմանների ճշտման եւ հողօգտագործման իրավունքի ձեւակերպման խնդրի հետ կապված:

Ի պատասխան՝ Երեւանի քաղաքապետարանից նրան 09.09.2014թ. թվագրված գրությամբ հայտնել են, որ բարձրացված հարցը սահմանված կարգով քննարկելու համար ի թիվս այլոց անհրաժեշտ է ներկայացնել տարածքի ճշգրտված տեղագրական հանույթը:

Հայտնում ենք, որ Արմանուշ Ամիրխանյանի կողմից վերոնշյալ հողամասի տեղագրական հանույթը նախորդիվ ներկայացրել է քաղաքապետարանին: Այդ մասին է վկայում Երեւանի քաղաքապետարանի՝ 20.07.2012թ.-ի թիվ 20/1-Ա-4439 գրությունը, որում, ի պատասխան Արմանուշ Ամիրխանյանի 14.07.2012թ.-ի դիմումի, նշվում է, որ նրա կողմից ներկայացված "…տեղագրական հանույթը ուղարկվել է աշխատակազմի ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչություն…":

Գտնում ենք, որ երկրորդ անգամ նույն փաստաթուղթը քաղաքապետարանին ներկայացնելու պահանջն իրավաչափ չէ: Նախ, այն արդեն իսկ մեկ անգամ ներկայացվել է, բացի այդ՝ երկրորդ անգամ ներկայացնելու համար քաղաքացին ստիպված է եւս մեկ անգամ վճարում կատարել մատուցվող ծառայության համար այն պարագայում, երբ պահանջվող փաստաթուղթն առկա է քաղաքապեարանում: Բացի վերոնշյալը՝ Արմանուշ Ամիրխանյանը 14.07.2012թ.-ի մեկ այլ դիմումով դիմել էր քաղաքապետարանին Հաղթանակ թաղամասի 5-րդ փողոցի հ.82 հասցեում գտնվող հողամասի վերաբերյալ իր դիմումների ընթացքի վերաբերյալ, որին ի պատասխան քաղաքապետարանը 06.08.2012թ. թվագրված գրությամբ հայտնել էր, որ տվյալ թաղամասում իրականացվում են հողամասերի

գույքագրման … աշխատանքներ, ինչի ավարտից հետո հնարավոր կլինի անդրադառնալ նրա բարձրացրած հարցին: Սակայն քաղաքապետարանը հաջորդի Արմանուշ Ամիրխանյանի դիմումին չի անդրադարձել:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք Արմանուշ Ամիրխանյանի ներկայացրած տեղագրական հանույթը, որը գտնվում է քաղաքապետարանում, հաշվի առնել Հաղթանակ թաղամասի 5-րդ փողոցի հ.82 հասցեում գտնվող հողամասի սահմանների ճշտման եւ հողօգտագործման իրավունքի ձեւակերպման խնդրի հետ կապված նրա՝ 2014թ.-ի սեպտեմբերի 1 թվագրված գրության դիմումի քննարկման համար:

Ինչպես նաեւ՝ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել Արմանուշ Ամիրխանյանի կողմից Երեւանի քաղաքապետարանին ներկայացված՝ Հաղթանակ թաղամասի 5-րդ փողոցի հ.82 հասցեում գտնվող հողամասի տեղագրական հանույթի պատճենը::

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան